

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ.


ԽՈԶՈՐ ՅԵՂՁՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍԻՆՆԵՐԻ
ՄԱՏՂԱԲՆԵՐ ԱՀԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 JAN 2018

ՀԽՍՀ ՀՈԴՔՈՂՎԱՏԱՑ

ՀՐԱՀԱՆԳ

ԽՈՇՈՐ ՅԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՂԱՇՆԵՐ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ



ԳՅՈՒՂՅՐԱՑ

1937


ՏԵՐԵՎԱՆ

ՀՂԻ ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ՅԵՎ
ՆՐԱՆՑ ԽՆԱՄՔԸ

1. Ծնելուց 40—60 որ առաջ հղի կովերը պետք է ցամաքեցվեն։ Յերիտասարդ և նիհար անասունների ցամաք շրջանը յերկու ամսից պակաս չպետք է լինի։

2. Յեթե առատ կաթնառովությունը խանգարում է կովը ցամաքեցնելուն, այդ դեպքում պետք է կրծատել որվա մեջ կիթերի թիվը, կերաբաժնից՝ հանել հյութալի կերերը, պակսեցնել խտացրած կերերի քանակը և այսպիսով տարիճանարար ցամաքեցնել։ Վորպեսզի հնարափոր լինի ձիշտ և ժամանակին վորոշել ծնի ու ցամաքեցնելու ժամանակը, անհրաժեշտ ե, վորյուրաքանչյուր կոլտնտապրանքային ֆերմանասունների զուգավորման հաշվառում կատարի։

3. Կովերին հղիության վերջին 90 որվա ընթացքում (բացի կենսապահ և արդյունվագետ կերից) հորթի աճի և հաջորդ լակտացիալի լիա-



ИНСТРУКЦИЯ

по воспитанию молодняка крупного
рогатого скота

Сельхозгиз Армении, Ереван, 1937 г.

կթութեան համար պետք ե լրացուցիչ 1—2 կի-
լոգրամ խտացրած (ուժեղ) կեր տալ: Տնտեսու-
թյունը խտացրած կերեր չունենալու դեպքուս
հղիության համար լրացուցիչ կերի հավելումը
պետք ե կատարել ի հաշիվ լավորակ խոտի: 300
կգ կենդանի քաշ ունեցող կովին ամեն որ
հարկավոր ե տալ 8—10 կգ լավորակ խոտ:
Ճամաքած հղի կովին չի կարելի միայն դարձանով
կերակրել:

4. Հղիության վերջին որերն անհրաժեշտ ե
կրծի նկատմամբ ուշադիր լինել և հետևել՝ յեթե
նկատվում ե, վոր կուրծն ուժեղ կերպով ուռ-
չում ե և բորբոքում առաջ գալու վտանգ կա,
ապա արմատապտուղները կերաբաժնից բոլո-
րովին պետք ե հանել:

5. Հղի կովերին անպայման լավորակ կերե-
րով պետք ե կերակրել: Բոլորովին արգելվում ե
հղի կովերին տալ բորբոսնած, ցրտահարված և
տաք կերեր, ինքնաշերմացման լենթարկված կա-
նաչ, արմատապտուղների փոքրի մեծ քանակու-
թյուն, ծլած կարտոֆիլ, անորակ սիլոս, թթված
ժոն և բարդա:

6. Վիճումից խուսափելու նպատակով՝ վաղ
գարնանը և ուշ աշնանը հղի կովերին ցողով
ձածկված արոտատեղերում չպետք ե արա-
ծեցնել:

7. Հղի կովի կերաբաժնի մեջ ամեն որ 100

գրամ հանքալին աղեր պետք ե ավելացնել, վորը
պետք ե կազմված լինի կավճի ալուրի, սովո-
րական աղի և ֆոսֆորաթթվային կրի կամ վոս-
կրալուրի հավասար մասերից: Հանքային աղերն
ուժեղ կերերի հետ միասին պետք ե տալ, իսկ
ուժեղ կերերի բացակայության դեպքում՝ առան-
ձին: Յանկալի յե սովորական աղը տալ կոշտե-
րով՝ լիզելու համար:

8. Հղի կովերի նկատմամբ հատուկ ուշադիր
հսկողություն պետք ե սահմանել: Պետք ե խիստ
կերպով հետեւել, վոր հղի կովերին չհրեն և չհար-
վածեն: Արոտացին շրջանում, մանավանդ զառի-
վայր տեղերում և սարալանջերում պետք ե խոռ-
սափել լիբկար և հոգնեցնող ձանապարհ քշելուց:
Հղիության վերջին 2—3 ամիսը պետք ե խոռ-
սափել նաև ճահճուտներում արածեցնելուց:

9. Հղի կովերին՝ ամեն որ պետք ե զբոսան-
քի հանել: Անձրևի և մերկասացի ժամանակ
հղի կովերին զբոսանքի չպետք ե հանել:

Հղիության վերջին 60—90 որերը կովերին
չըելու համար գետափ կամ ջրհորի մոտ չպետք
ե քշել: Այդ ժամանակ նրանց զոմում պետք ե
ջրել:

10. Ծնելուց 5—10 որ առաջ հղի կովերին
հատուկ այդ նպատակի համար կահավորված
ծննդարան պետք ե փոխադրել: Ծննդարանը

պետք ելինի մաքուր, լուսավոր, տաք և չոր: Այնտեղ, ուր հատուկ ծննդարան չկա, այդ նպատակի համար առանձնացվում և հարմարեցվում ե գոմի մի մասը:

11. Ծննդարաններում սանիտարների կամ տավարապահների ցերեկալին և գիշերալին անընդհատ հերթապահություն պետք ե սահմանել:

12. Ծննդարանում գտնվող կովերը պետք ե ժապահովված լինեն առատ և թարմ ցամքարով: Այդ նպատակի համար լավագույնն աշնանացանի ծղոտն ե:

13. Ծնելուց հետո կովերին լավ խոտ և գոր պետք ե տալ: Վոչ մի գեպքում չի թույլատրվում նորածին կովերին ջրելու համար գուրս տանել: Նրանց պետք ջրել ներսը — գոմում՝ Յ.ի 10—12⁰ ջերմության ջրով:

14. Վիժման ամեն մի դեպքում պետք ե կասկածել, վոր դա վարակիչ վիժում (ինֆեկցիոն) կարող ելինել: Այդպիսի դեպքում վիժած կովին պետք ե անմիջապես առանձնացնել առանձին շենքում (մեկուսարան), ընկերքի և սատկած հորթի դիմակի վրա կրաշուր կամ կարբույան թթվի հինգ տոկոսանի լուծուլթ կամ կրեոլին լցնել ու անմիջապես գոմից դուրս տանել և անասնագերեզմանոցում թաղել: Այն գոմը,

ուր վիժում ե տեղի ունեցել, պետք ե կրով մանրակրկիտ ախտահանման յենթարկվի: Վարակիչ վիժումը կարող ե ամբողջ նախիրը վարակել, դրա համար ել բոլոր կասկածելի դեպքերի մասին անմիջապես պետք ե անասնաբուժին հաղորդել: Անասնաբուժը՝ հայտնաբերելով վիժման պատճառները՝ հետագա պարզաբեր մասին անհրաժեշտ ցուցումներ պետք ե տա:

2

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՊԱԿՊԱՆՈՒՄԸ

ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԻ ԱՐՍՉԻՆ

10—15 ՈՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Կովը ծնելուց անմիջապես հետո չոր մաքուր շորով պետք ե սրբել հորթի դնչի և քթի վրա լեղած լորձունքը: Հորթի պորտը, վոր սովորաբար ինքնիրեն ե կտրվում, պետք ե անմիջապես բաժակի մեջ լցըած մաքուր կրեոլինի կամ լողի մեջ սուզել: Յեթե պորտն ինքնիրեն չի կտրվում, ապա այն կարելի յե փորթց 5—8 սմ հեռավորությամբ, ախտահանված ու մաքուր մկրատով կտրել և նրա ծայրը բաժակի մեջ լցըած մաքուր կրեոլինի կամ յոդի մեջ թաթախել:

2. Ծնելուց հետո հորթի մարմինը պետք ե

մաքուր ծղոտի կամ խօտի փնջով սրբել ու նրան անմիջապես փոխադրել պրոֆիլակտոր-հորթանոց (նորածին հորթերի, ընդունարան), վորը պատրաստում են ծննդարանին կից, մի ընդհանուր ժամկի տակ:

Հորթի խնամքի հետ կապված բոլոր աշխատանքները պետք ե կատարել մաքուր խալաթ հագած ու մաքուր և ախտահանված ձեռքերով:

3. Յեթե նորածին հորթի համար առանձին հատուկ հորթանոց չկա, այդ դեպքում նրանց պահպանման համար ընդհանուր հորթանոցի ամենատաք մասը պետք ե հատկացնել: Հորթին մի տեղից մի այլ տեղ փողադրելիս պետք ե զգուշ լինել և նրան չմրսեցնել: այդպիսի դեպքում նրան պետք ե հարմար շորով փաթթել և ապա դուրս հանել:

4. Նորածին հորթերին պետք ե շարժական առանձին վանդակներում պահել: այդ վանդակները պետք ե ունենան $1,1 - 1,2$ մետր յերկարություն, $0,75 - 0,85$ մետր լայնություն և $0,90 - 0,95$ մետր բարձրություն և գետնից $20 - 40$ սմ բարձրությամբ հատակ:

5. Վանդակները հորթանոցում այնպես պետք ե տեղափորել, վոր նրանք արտաքին ցուլու պատից հեռու դրված լինեն: Վանդակի պատերն ուղղաձիգ պետք ե լինեն և պատրաստված յեզ-

քերը կորացրած ձաղերից: Ձաղերի միջի տարածությունը $6 - 8$ սմ ավելի չպետք ե լինի: Վանդակի առաջի կողմի պատի վրա դռնակն ե շինվում (ձաղերից), վորն իր մեջտեղում անցք ե ունենում դրսի կողմից: Դռան ցածրի մասում, դուզլը տեղափորելու համար, փալտից կամ լերկաթից ողակապ պետք ե ամրացնել:

6. Պրաֆիլակտոր-հորթանոցում խոնավություն յեվ միջանցիկ քամիներ բցյառվիճ չպետք ե լինեն: Այստեղ լավ ոդափոխիչ (վենտիլյատոր) յեվ հավասարաչափ ջերմություն (հաստակի մաս ըստ $8 - 10 - 12^{\circ}$) պետք ե լինի:

Հորթանոցի լուսամուտների լուսատու մակերեսը հատակի մակերեսի մի տասերորդական մասից պակաս չպետք ե լինի, այսինքն՝ հատակի լուսաքանչյուր 10 ± 1 մակերեսի համար մեկ մետր լուսատու մակերեսով լուսամուտ պետք ե ունենալ:

7. Յեթե հորթանոցի հատակն աղյուսից, ցեմենտից և այլ նման նլութերից ե պատրաստված, անհրաժեշտ ե նրա վրա փալտիա շարժական հատակ շինել: Հորթանոցում անպայման միգատար խողովակներ և միզընդունարաններ պետք ե ունենալ:

8. Պրոֆիլակտոր-հորթանոց կառուցելիս, հնչպես նաև հորթերի խնամքի ժամանակ պետք

ե. ամեն կերպ աշխատել վոր հորթանոցի թե
հատակում և թե ոդում խոնավություն չլինի:

9. Հորթը պրոֆիլակտոր-հորթանոցում
պետք ե պահել մոր կաթով կերակրելու ամբողջ
ժամանակաշրջանում, այսինքն՝ ծնված որից հաշ-
ված 10—15 որից վոչ պակաս Յեթե այդ մի-
ջոցին հորթը բավարար չափով չի ամրապնդվել
ապա այդ ժամանակամիջոցը պետք ե յերկա-
րացնել:

10. Հորթի տակ միշտ, միջին հաշվով յու-
րաքանչյուր գլխին 2 կգ չոր և լավորակ ծղո-
տից ցամքար պետք ելինի, վորն որական ամե-
նապակասը 2—3 անգամ պետք ե փոխել:

11. Վորպեսզի հորթերը ցամքար չուտեն,
մեկը մյուսին չծծեն, կեղտոտ առարկաներ չլի-
զեն, անհրաժեշտ են նրանց դնչկալներ հաղցնել:

12. Ամենալավը մետաղյա դնչկալներն են:
Մեկ հորթի համար գործադրելուց հետո այդ
դնչկալները պետք ե լավ ախտահանել և ապա
մի ուրիշ հորթի համար ոգտագործել:

13. Հորթերին դնչկալներ հապցնելու տևո-
ղությունը 10—15 որ ե:

14. Հորթանոցը միշտ մաքուր պետք ելինի,
վորի համար անհրաժեշտ ե,

ա) գոմաղբը և կեղտոտված ցամքարն որը
2—3 անգամ դուրս տանել.

բ) վանդակների կեղտոտված պատերը, մի-
զատար խողովակներն ամեն որ լվանալ և մաք-
րել.

գ) ըստ անհրաժեշտության վանդակի պա-
տերն սպիտակեցնել, իսկ տասն որը մեկ անգամ
կրակաթով ամբողջովին սպիտակեցնել:

Ամբողջ հորթանոցն սպիտակեցնել տարեկան
յերկու անգամ՝ գարնանը և աշնանը.

դ) ամեն որ հորթին խոզանակով մտքրել՝
իսկ մարմնի աղտոտված մասերը գոլ ջրով լվա-
նալ և անպալման չոր շորով չորացնել:

15. Ամառվա տաք և լավ լեղանակներին
հորթերին անպայման զբոսանքի հանել, վորի
համար հորթանոցին կից, չոր վայրում, հատուկ
զբոսավայր պետք ե պատրաստել:

16. Կաթի միջոցով վարակիչ հիվանդություն-
ների տարածումը կանխելու նպատակով, ամեն
անգամ կթելուց առաջ կովերի կուրծն ուշադիր
կերպով լվանալ և չորացնել: Կաթի առաջին
2—3 շիթերն առանձին ամանի մեջ կթել և այդ
կաթով վոչ մի գեպքում հորթերին չկերակրել:

17. Թոքախտավոր, վարակիչ վիճումով և
գաբաղով հիվանդ կովերի խեժը կարելի յե հոր-
թերին տալ միայն այն՝ գեպքում, յերբ անհնար
և նորածին առողջ կովերի խեժ ձեռք բերել:

18. Կովերը կթելուց և հորթերին կաթ

խմեցնելուց առաջ ձեռքերն անպատճառ պետք ե
լվանաբ:

19. Կաթը խմեցնելուց հետո հորթերի զնչիկ-
ները մաքուր շորով կամ սրբիչով պետք ե մաք-
րել: Խեժով կերակրելու դեպքում հորթերի զնչիկ-
ները պետք ե գոլ ջրով լվանալ և շորով չորաց-
նել: Յուրաքանչյուր հորթի առանձին սրբիչ
պետք ե հատկացնել:

20. Հորթեր խնամող հորթապահի կամ
կթող տափարապահի շորերը պետք ե միշտ մա-
քուր լինեն:

21. Վարակիչ հիվանդությունների մուտքը
կանխելու նպատակով, առանց ֆերմալի վարիչի
հատուկ թուլտվության, բացի հորթանոցն սպա-
սարկող անձնակազմից, կողմնակի մարդկանց
մուտքը պետք ե արգելել:

Հորթերին սպասարկող անձնակազմը, նախ-
քան հորթանոց մտնելը, պետք ե խալաթ հագ-
նի և հորթանոցի դռան առաջ դրած՝ կը եռինի,
լիզոլի և այլ ախտահանող լուծույթով թրջված՝
լաթի, խսրի կամ թաղիքի կտորի վրա վոտները
սրբի, ախտահանի և ապա հորթանոց մտնի:

22. Հիվանդ հորթերի համար պետք ե հա-
տուկ շենք՝ մեկուսարան պատրաստել:

23. Հորթապահները պետք ե խիստ կերպով
հետևեն և ուշադիր լինեն հորթերի առողջությանը:

Ամենաչնչին կասկածի դեպքում անգամ պետք ե
անմիջապես հորթի ջերմաստիճանը չափել և լեթե
ջերմությունը 3-ի 40° ե կամ բարձր, անմիջա-
պես նրան հիվանդ հորթերի համար հատկացրած
շենքը՝ մեկուսարան պետք ե փոխադրել:

24. Ախորժակի բացակայության, սաստիկ
հաղի և բարձր ջերմության դեպքում (քթի հայե-
լին՝ չոր և տաք) հիվանդ հորթերն առողջներից
նույնպես առանձնացվում և տեղափորվում են
մեկուսարանում:

25. Լուծով հիվանդ հորթերին կաթով չպետք
ե կերակրել. Նպատակահարմար ե կաթի փոխա-
րեն նրանց որական 2-3 անգամ 1-2 լիտր
յեռացրած ջուր տաք: Զուրը ևս նույն ջերմաս-
տիճանը պետք ե ունենա, ինչ վոր կաթը: Հոր-
թի լուծը վերջանալուց հետո, աստիճանաբար,
յուրաքանչյուր անգամ կես լիտր կաթ ավելաց-
նելով, ջուրը պետք ե փոխարինել կաթով. Յեթե
լուծը չի անցնում, հիվանդ հորթին ամեն որ
յերիցուկի (ռամաշկա) կամ կտավհատի սերմի
խաշու (1 մաս կտավհատի սերմին 20. մաս
ջուղ) կամ գերչակի ձեթ պետք ե տալ:

26. Նկատի ունենալով այն հանգամանքը,
վոր հիվանդ հորթերը մեծ քանակությամբ վա-
րակիչ բակաերիաներ են արտադրում, հիվանդ
հորթի վանդակը, կանգնելու տեղը, արկղը, ինչ-

պես նաև այն բոլոր իրերը, վարսանց հետ հորթն առնչություն ե ունեցել, պետք ե մանրակրկիտ կերպով լվանալ և ախտահանել.

ա) վանդակի, հորթի կանգնելու տեղի, ինչպես նաև արկղի վրա պետք ե թարմ հանգցրած կրի լուծուկթ շաղ տալ (1 դույլ ջրին 2 կզ կիր);

բ) խալաթը, սրբիչները և լաթերը պետք ե ջրում լավ յեռացնել;

գ) դույլերը և այլ ամանեղենը պետք ե սոդայի 2—3 տոկոսանի լուծուկթում յեռացնել:

27. Հորթանոցում վարակիչ հիվանդություն հայտաբերելու դեպքում նորածին հորթերին այլևս այնտեղ չպետք ե տեղափորել. նրանց համար ժամանակավորապես, մինչև վարակի վոչընչացումը, ուրիշ շենք պետք ե հարմարեցնել

Վոչ մի դեպքում չի թույլատրվում վարակված հորթանոցից փորձե իր, կենդանի կամ հորթապահ նոր հորթանոցն անցնի:

Համաճարակը վերացնելուց հետո վարակված հորթանոցը կեղախց ու գոմաղբից պետք ե մաքրել, պատերը, առաստաղը չհանգցրած կրով սպիտակեցնել, հատակի վրա $5^{\circ}/_6$ ի կրեոլին շաղ տալ, գույքը կրեոլինի լուծուկթով լվանալ, իսկ ամանեղենը ջրում լավ յեռացնել:

28. Սատկած հորթերի դիակները հորթանոցից անմիջապես պետք ե հեռացնել և անառնագերեզմանոցում 1,5 մետր խորությամբ թաղել:

ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ծնվելուց 1,5—2 ժամ հետո նորածին հորթին պետք ե թարմ կթած՝ 3-ի 36—38⁰ ջերմաստիճանի խեժով կերակրել կամ անմիջապես ծծեցնել:

2. Հորթին խեժով պիտի կերակրել որական 4—5 անգամ, հավասար ընդմիջումներով, այն ե՛ առավոտյան ժամը 4-ին, առավոտյան ժամը 10-ին, ցերեկը ժամը 4-ին և յերեկոյան ժամը 9-ին. Միջակ հորթին առաջին որը 3—4 լիտր խեժ պետք ե ատլ. Խեժը տրվում ե ծնած կովը կթելուց անմիջապես հետո:

3. Խեժով կերակրելիս պետք ե հատուկ ուշադրությամբ հետևել, թե հորթի վրա ինչպես ե ազդում այս կամ այն կերաբաժինը և ըստ այնմ ել տրվելիք խեժի չափը փոփոխել:

4. Հորթը տասն որից վոչ պակաս իր մոր կաթով պետք ե կերակրվի: Յեթե մայրը հիվանդացել ե կամ սատկել, ապա պետք ե կերակրել միաժամանակ ծնած մի ուրիշ առողջ կովի կաթով:

5. Յեթե կասկած կա, թե կաթը լավորակ չե և թոքախտի բակտերիաներով վարակված կարող ե լինել, այդպիսի դեպքերում հորթերին

կերակրելու համար պետք ե ոգտագործել կատարյալ առողջ կովերի կամ հատկապես առանձնաբաժն կերակրող-կովերի կաթը, իսկ յեթե կթվող առողջ կովեր չկան, ապա կաթը պետք ե պաստերիզացնել, այսինքն՝ տաքացնել մինչ Յ.ի 80° Կարդ ջերմաստիճանում 5 րոպե պահելուց հետո սառեցնել մինչև Յ.ի 36—38°, ապա հորթերին կերակրել:

Յերբ հարկադրված են լինում նորածին հորթերին ավելի վաղ ծնած կովերի կաթով կերակրել, այդպիսի դեպքերում կաթին $\frac{1}{3}$ -ի չափով յեփացրած և ապա սառեցրած Յ.ի 36—38°-ի հասցրած ջուր են խառնում:

6. Տասնորյա հասակից սկսած հորթերին որական 3 անգամ պետք ե կերակրել:

7. Հորթին կաթով կերակրելիս չպետք ե թույլ տալ, վոր նա կաթի ամբողջ կերաբաժինը մի անգամից խմի, 3—4 անգամ նրան պետք ե ընդհատել և թեկուղ մեկական րոպե հանգիստ պալ:

8. Հորթին ջուր պետք ե սկսել տալ կաթի կերաբաժինը պակսեցնելու պահից: Այդ ջուրը պետք ե յեռացնել և ապա սառեցնել՝ հասցնելով կաթի ջերմաստիճանին: Ջուրը պետք ե տալ մաքուր գրությամբ, կաթից և խտացրած կերերից անջատ, խտացրած կերերը տալուց մեկ ժամ հետո:

ԱՄԱՆԵԴԻՆԸ


1. Այս ամանները, վորոնցով հորթերին կերակրում են, պետք ե լինեն սպիտակ կամ ցինկապատ յերկաթաթիթեղից, կամ կլայեկած լինեն:

2. Ցանկալի յեթե վոր յուրաքանչյուր հորթ առանձին դույլ ունենա: Յեթե ֆերմայում անհրաժեշտ քանակությամբ դույլեր չկրն, մի դույլից մի քանի առողջ հորթերի կարելի յե կերակրել միայն մի պայմանով, վոր յուրաքանչյուր հորթի կերակրելուց հետո դույլը յեռացրած ջրով խնամքով լվացվի:

3. Ամանները պետք ե շարունակ մաքուր լինեն, վորի համար և ոգտագործելուց հետո, պետք ե, նախապես սառը ջրով վողողելուց հետո, տաք ջրով և մոխրաջրով կամ սողայով ($2-3^{\circ}/\text{o}-\text{ի}$ լուծույթով) լավ լվանալ և չորացնել:

Հորթերին կաթ խմեցնելուց առաջ ամբողջ ամաննեղենը ջրում պետք ե լավ՝ յեռացնել:

4. Հորթին արվելիք կաթը և խեժն ստույգ չափելու համար անհրաժեշտ ե հորթանոցում յերկար կոթով չափի առաժակներ ունենալ:



ՀՈՐԹԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

ՍԿՄԸ 10—15 ՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԻՅ

ՄԻՆՉԵՎ ԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՁԸ

1. 10—15 որական հորթերին՝ ընդունացան հորթանոցից (պրոֆիլակտոր-հորթանոց) պետք է մի ուրիշ հորթանոց փոխադրել ուր նըանց պետք ե մինչև 5—6 ամսական հասակը պահել:

2. Մինչև մեկ ամսական հասակը յուրաքանչյուր հորթի առանձին վանդակում պահել:

3. Մեկ ամսական հասակից կարելի յետող հորթերին խմբով՝ յուրաքանչյուր վանդակում 4—5 գլուխ պահել, սակայն մի պայմանով միայն, վոր կաթը և խտացրած կերերը յուրաքանչյուր հորթին առանձին-առանձին տրվեն: Յուրաքանչյուր խմբում, ըստ հնարավորության, հավասար հասակ և կենդանի քաշունեցող հորթեր պետք ե առանձնացնել:

4. Անհատական (ամեն մի հորթի համար առանձին) վանդակը հետեւյալ չափի պետք ե լինի՝ յերկարությունը 1,2—1,5 մետր, լայնությունը՝ 1,0—1,2 մետր և բարձրությունը՝ 1—1,2 մետր:

5. Խմբակային վանդակի չափը վորոշվում է յուրաքանչյուր հորթին 1,5—2,0 քառ. մետր տարածություն հատկացնելու չափանիշով:

6. Վանդակի դեպի միջանցքն ընկնող պատի վրա, արտաքին կողմից պետք է շինել շարժական մսուրը:

7. Խմբակային պահպանման դեպքում, հորթերին առանձին-առանձին կերակրելու նպատակով, վանդակի առջեկ՝ դեպի կերակրման անցքն ընկած պատի ուղղաձիգ ձողերը միայն ներքեւ մասում են ամրացվում, իսկ վերեկ մասում կարող են շարժական լինել: Կաթով և խտացրած կերերով կերակրելու ժամանակ հորթի գլուխն ամրացվում ե ձողերի շարժական մասում և նա կարողանում է միայն իր առաջ դրված կերից ոգտվել:

Վանդակի ձողերը մեկը մյուսից 12—15 սմ հեռավորության վրա պետք է խփել:

8. Դույլը կաթով կամ խտացրած կերով պետք է դնել կերանցքը և այնպես ամրացնել, մոր հորթը դույլի մեջ յեղած կերը շուռ չտա:

9. Հորթանոցի ջերմությունը հատակի մոտ պետք է լինի 3-ի 8—10⁰, ըստվորում ջերմաստիճանի սուր տատանումներ անթույլատրելի յեն:

10. Հորթանոցի հատակը և լուսամուտները նույնպես պետք ե շինել համաձայն այն պահանջների, վոր առաջադրվում են ընդունարան-հորթանոցին (պրոֆիլակտոր-հորթանոց):

ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. 10—15 որից հետո հորթին իր մոր կաթով կերակրելուց կարելի յէ ընդհանուր կիթերից ստացված կաթով կերակրելուն անցնել։ Այնպես պետք ե կազմակերպել, վոր կերակրման համար սահմանված ժամերն ամենայն խստությամբ պահպանվեն։ Պետք ե կերակրել որը 3 անգամ և կթից անմիջապես հետո օանկալի յէ կաթնակեր հորթերի կերակրման համար լակտացիայի առաջին կիսում գտնվող առողջ կովերի հատուկ խումբ առանձնացնել։

2. Հորթերին պետք ե կերակրել համաձայն ավյալ հորթի ցեղի համար մշակված կերակրման սխեմայի, նրա հետագա նշանակման և կենդանի քաշի ցանկալի աճի՝ դեկավարվելով կցված աղյուսակներով։

3. ՊՏԳ և ՇՏԳ գրանցված կովերից և ցութերից սերված հորթերը պետք ե ավելի առատ և քստ նրանց ծնողների տոհմային արժանիքների սահմանված կերաբաժիններով կերակրվեն։

Թույլ, հիվանդացած, ինչպես և հիվանդ մայրերից սերված հորթերը նույնպես պիտի կերակրով վեն համեմատաբար առատ անարատ և քաշած կաթի կերաբաժիններով, քան այդ ցույց և տված կերակրման նորմաներում։

4. Թե կաթը և թե խեժը հորթին պետք ե-

տալ կթելուց անմիջապես հետո, քանի նա դեռ տաք ե, Յեթե կաթը բառել ե, պետք ե լցնել մաքուր դույլի մեջ, դույլը դնել տաք ջրի մեջ, կաթի ջերմությունը Յ-ի 36—38°-ի հասցնել, ապա տալ հորթին։

5. Կոչ մի գեղքում չի թույլատրվում թերկուղ քիչ թթված կաթով կերակրել հորթին, քանի վոր նա մարսողության որդանների վրա վատ ե աղդում և լուծ ե առաջացնում։

6. Այն կովերին, վորոնց կաթով հորթերը կերակրվում են, պետք ե խուսափել մեծ քանակությամբ (10 կգ ավելի) թթված ժոմ և բարդատալուց, վորովհետև այդպիսի կերով կերակրված կովերի կաթը հորթերի մարսողության որդանների վրա վատ ե անդրադառնում։

7. Մաքուր, չզաված կաթով հորթին կերակրելու ժամանակաշրջանը 50—60 որից պակաս չպետք ե լինի։ Իսկ այն գեղքերում, յերբ հորթը թե մաքուր, թե զոված (յերեսը քաշած) կաթով ե կերակրվում, այդ ժամանակ մաքուր կաթից զտածին պետք ե անցնել աստիճանաբար՝ սկսած հորթի 18—20 որական հաստից։

8. Յերես քաշած կաթը ևս իր վորակով պետք ե բավարարի այն բոլոր պահանջները, վոր առաջաղրվում և մաքուր կաթին։ Զտած կաթը նույնպես թարմ պետք ե լինի և հորթին տալու միջոցին Յ-ի 34—36 ջերմաստիճան

ունենա: Յուղամշակման գործարանից ստացված յերես քաշած կաթը պետք եւ պաստերիզացիայի յենթարկել կամ մածուն պատրաստել և նոր նրանով հորթին կերակրել: Մածունը պետք եւ մաքուր կուլտուրայով պատրաստել և հորթերին այնչափ տալ, վորքան զտած կաթ եւ տրվում: Մածնին պետք եւ վարժեցնել աստիճանաբար:

9. Առանձնապես զտած կաթի վորակի նկատմամբ պետք եւ ուշադիր և պահանջկուտ լինել ամառը, յերբ անորակ զտած կաթով կերակրելը հորթերի լուծ առաջանալու և անկումների հիմնական պատճառներից մեկն հանդիսանում: Վոչ մի դեպքում չի թույլատրվում հորթերին վոչ թարմքիչ թթված կաթով կերակրել:

10. Մաքուր կաթից զտած կաթով կերակրելուն պետք եւ անցնել աստիճանաբար, յերկու տասնորյակից վոչ պակաս ժամանակի ընթացքում:

11. Թոքախտավոր կովերի զտած կաթը՝ յեթե հսարաւոր չե այն առողջ կովերի կաթով փոխարինել, պետք եւ պաստերիզացիայի յենթարկել այսինքն՝ Յ-ի մինչև 80° տաքացնել, այդ ջերմաստիճանում 5 րոպե պահելուց հետո սառնեցնել—հասցնել նորմալ ջերմաստիճանի և ապա հորթերին կերակրել:

12. Հորթերին տրվող կաթի և ջրի ջերմաս-

տիճանը հասակին համեմատ ել աստիճանաբար պակասում ե: Յերկու ամսական հորթին կաթը և ջուրը կարելի յե տալ Յ-ի 30° ջերմությամբ, յերեք ամսական հորթին արդեն կարելի յե տալ սենյակի ջերմության, սակայն Յ-ի 10—12°-ից վոչ պակաս ջերմաստիճան ունեցող հում ջուր:

13. Խտացրած կերերը կերաբաժնի մեջ մացվում են այն ժամանակից սկսած, յերբ դադարում են անարատ կաթի քանակին ավելացնել միայն անարատ կաթով. կերակրելու դեպքում, իսկ անարատ և զտած կաթով կերակրելու դեպքում՝ զտած կաթով կերակրել սկսելու ըոպեյից, միայն յերկու դեպքումն ել հորթը 20 որական հասակից պակաս չպետք ել լինի: Հորթերին տրվելիք խացրած կերերը պետք եւ բորբոսած և մղլած չլինեն, ուրիշ նյութերի խառնուրդ չունենան և շատ լավ վորակի լինեն:

14. Խտացրած կերերը կերաբաժնի մեջ պետք եւ մացնել քիչ քանակությամբ (50—100 գրամ), հետագայում այդ քանակին աստիճանաբար ավելացնելով:

15. Սկզբնական շրջանում (մինչև մեկ ամսական հասակը) խտացրած կերերը պետք եւ տալ լափի ձևով (կաթի հետ խառնած), իսկ 30 որական հասակից հորթերին պետք եւ վարժեցնել

խոտացրած կերերը քիչ թրջված դրությամբ
ուտելուն:

16. Հորթերի համար պետք է պատրաստել
հատուկ, լավագույն վորակի խոռ, վորը պետք է
լինի մատղաշ փափուկ և մինչև ծաղկելը կամ
ծաղկման շրջանում հնձած: Թիթեռնածաղկավոր-
ների խոտը պետք է հնձել այն ժամանակ, յերբ
նրանց մեջ կոչտ մասերը շատ չնշին քանակու-
թյուն են կազմում, այսինքն՝ մինչև ծաղկելը:

17. Հորթերին խոռ ուտելուն պիտի վար-
ժեցնել 20 որական հասակից:

18. Արմատապտուղները հորթի կերաբաժնի
մեջ պետք է մտցնել նրա յերկու ամսական հա-
սակից սկսած, սկզբում շատ քիչ քանակությամբ
(150—200 գրամ), իսկ հետագայում պետք է
աստիճանաբար ավելացնել:

19. Սիլոսը հորթի կերաբաժնի մեջ պետք
է մտցնել նրա 4 ամսական հասակից սկսած:
Հորթին տրվելիք սիլոսը պետք է լինի լավա-
գույն վորակի և առանց թթվության սուր հոտի,
և փշացածության վոչ մի նշան չպետք է ունենա:

20. Հորթերի որգանիզմն ամրապնդելու և
վոսկորների աճն ապահովելու նպատակով, այն
որվանից, յերբ անարատ կաթի քանակն սկսում
են պակսեցնել, հորթին ամեն որ հանքային
նյութեր՝ սովորական աղի, կավճի, ֆոսֆորաթթվ-

վային կալցիումի կամ վոսկորալյուրի հավասա-
րաչափ մասերի խառնուրդ պետք է տալ Այդ-
պիսի խառնուրդը պետք է տալ սկսած որական
10 գրամից, աստիճանաբար ավելացնելով և
մինչև 8—10 ամսական հասակը հասցնելով որա-
կան 35 գրամի: Հանքային աղերը պետք է տալ
խոտացրած կերերի հետ խառը:

Խ Ն Ա Մ Ք Բ

1. Ամառվա ընթացքում ամհրաժեշտ է հոր-
թերին, վորքան կարելի յե, յերկար ժամանակով
դրսում—մաքուր ողում պահել նրանց հորթանոց
պետք է քշել միայն կերակրելու համար և գի-
շերը, անձրեսի ժամանակ և մեկ ել այն դեպ-
քում, յերբ մեծ քանակությամբ բռուեր և շնա-
ձանձեր կան. հորթերին աղատ ողում պահելու
համար հորթանոցին կից ցանկապատած զբոսա-
վայր պետք է պատրաստել, ուր հորթերին անձ-
րեներից և կիզիչ արևից պաշտպանելու հա-
մար նաև ծածկոց պետք է կառուցել:

Ապօռուր ողում և արևի ճառագայթների
տակ հորթերին պահեն ամրապնդում և նրանց
որգանիզմը և ուժեղացնում նրանց աճը:

2. Զմեռը նույնպես 10 որական հասակից
սկսած հորթին անպայման ցանկապատած ընդար-
ձակ զբոսավայրում զբոսանքի պետք է հանել:
Հորթերին զբոսանքի պետք է վարժեցնել աստի-

Հանաբար: Պետք ե սկսել 5—10 րոպե տևողությունից և հասցնել 2 ժամից վաստ յեղանակներին, Յի 10—15⁰-ից ավելի սառնամանիջների ժամանակ հորթերին զբոսանքի չպետք ե հանել: Պետք ե ուշադիր կերպով հետեւել, վոր զբոսանքի միջոցին հորթերը չնստեն և մեկ տեղում կանգնած չմնան: Նրանք շարունակ շարժման մեջ պետք ե լինեն:

3. Հորթերին պետք ե կշռել հետեւյալ ժամկետներին:

1-ին կշռումը՝ ճնելու որը, մինչ խեժով կերակրելը.

2-րդ կշռումը՝ ճնելուց 10—15 որ հետո (ընդունարան-հորթանացից ընդհանուր հորթանոց փոխազրելու ժամանակ):

Դրանից հետո հորթերին ամիսը մեկ անգամ պետք ե կշռել:

Մի բրիգադից մյուս բրիգադին անցնելու, ինչպես նաև սպասարկելու համար ամրացրած աշխատողին փոխելու ժամանակ հորթի կենդանի քաշն անպատճառ պետք ե վորոշել:

Հորթերին պետք ե կշռել առավոտյան՝ նախքան կերակրելը:

4. Կեռքի բացակայության դեպքում կենդանի քաշը պետք ե վորոշել չափումների միջոցով, վորը պետք ե կատարել հրահանգի վերա-

ջում կցված՝ ֆրովեյնի աղյուսակի համաձայն: 5. Յուրաքանչյուրը հորթի իր համարը պետք է ունենա, վորի համար նա համարակալվում է՝ ականջին մետաղյա համարակալ հաղցնելով կամ կտվածքի (տատուիրովկայի) միջոցով (ականջի մաշկի վրա համապատասխան ունելիքով համար և նշվում): Տոհմական հորթերի համար, վորպեսպիսի համարը չկորչի, յերկու ձևն ել միաժամանակ պետք ե կիրառել:

4

ՄՄՈՂ ՀՈՐԹԵՐԻՆ ԴԱՍԻՄԱԿԵԼԸ

1. Մսային և մսա-կաթնատնտեսական ապրանքային ֆերմաներում, ուր հորթերին ձեռքից կերակրելու համար դեռևս անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծված, թույլատրելի յե ձեռքից կերակրելուն զուղընթաց հորթին նաև ծծեցնելով աճեցնել:

2. Հորթին ծծեցնելով աճեցնելու դեպքում, ծնվելուց հետո, հորթին պետք ե սրբել և լավ չորացնել ինչպես նաև մոր կուրծը պետք ե լավ լվանալ, սրբել և ապա հորթին մոր տակը թողնել ծծելու համար:

Առաջին 5—6 որը հորթին որական 4—5

անդամ պետք ե թողնել մորը ծծելու, իսկ 10—15
որական հասակից պկասձ՝ որական 3 անգամ:

3. Կթելուց 3—5 րոպէ առաջ պետք ե հորթին թողնել մոր տակ, հետո հետ քաշել ու մորը կթել մեկել կթելուց հետո պետք ե թողնել ծծելու:

4. Ծծելու տևողությունը պետք ե պակւսցնել այն հաշվով, վոր 2 ամսական հասակում հորթը մորը ծծելուց կտրվի: Այդ որվանից սկսած հորթին մոր տակ պետք ե թողնել միայն նրա համար, վորպեսզի կովը կաթ տա, հետո իսկույն նրան պետք ե հետ քաշել և վանդակը քշել:

5. Հորթերին ծծեցնելու միջոցով աճեցնելու դեպքում պետք ե առանձնահատուկ կերպով հետեւվել նրանց զարդացմանը և աճին: Այդ գեպքում կովերի կիթն այնպես պետք ե կարգավորել վոր մոր կրծում հորթի համար անհրաժեշտ քանակությամբ կաթ մնա:

6. Մորը ծծելով մեծացող հորթերին զտած կաթով լրացուցիչ կեր պետք ե սկսել տաէ 18—20 որական հասակից և այն ել այն նորմաներով, ինչպիսին նախատեսված ե ձեռքով կերակրովով հորթերի համար:

Այդ ժամանակիանից ել պետք ե սկսել հորթերին խտացրած կերերի վարժեցնել անշուշտ, պահպանելով ձեռքով կերակրելու համար սահմանած կանոնները:

5

ՀՈՐԹԵՐԻ ՀԵՏԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՇԵՅՈՒՄԸ

1. Կաթնային շրջանից հետո մինչև մսուրային շրջանը հորթերին խմբակային վահդակների մեջ պետք ե պահել: Ցուլիկներին յերինջներից պետք ե անջատել 5 ամսական հասակում:

2. Կաթնային շրջանից հետո հորթերի շենքի ջերմությունը 8-ի 8⁰ պետք ել լինի:

3. Այդ հասակի հորթերին նույնպես պետք ե ուշիմ և հոգատար խնամել:

Չորս ամսականից բարձր հասակ ունեցող հորթերին որական 4—5 ժամ զբոսանքի պետք ե թողնել, իսկ ամառվա ընթացքում, ըստ հնարավորության, ամբողջ որը պետք ե բացովթյա պահել միայն մի պայմանով, վոր առանձին ծածկոց լինի կառուցված:

4. Ինչպես ընդհանուր կանոն, հորթերի կերպաժինը, ըստ հնարավորության, բազմազան կերերից պետք ե կազմված լինի, ուր բացի կոպիտ կերերից պետք ե մտնեն նաև խտացրած, հյութալից (արմատապուղներ, սիլոս) կերեր և հանքային աղեր:

5. Մատղաշների համար հատկացրած խոտը

պամթիւավեց նոզմեկ զմգոցովմեր քտիիքտօք .²
ողորհումելին ո պայտած ոզիմա զ ժագեն ըմգոշուե
ասոյ քտինաղջուստ մորտց վրանառ Ո .³
յրազստնամնուտ ո տոխ տմի ոտմթիւանսն
ոցտ ո պարհունմտե նոդմե մեզմիւմելի ոզենմո
ովազիսիմսի օմ վլզմտոմիւաթուո լզմիւմելի իսուոր
մուն յոտի իսասնօ ոմտվր ովմթոշունստ Ո .⁴

Լզմնալզիտ զմ վլզմտի մկողութ վմզմելի քտմ
բոտաթ յուսմենց ուլուզզուա մզի կոմսիտու
մի-իկ 9'0—8'0 լզմնուց ո լզմնեցվ զմ
վլզմտի մփուէ վոքումումելի ոտկումս վմզմելի կոմ
բոտութ յուսմենց ուլուզզուա տառի կոմսիտու
մի-զմ քտիյետի զ ժագեն նովմզմելի
նովմթիսի ո տվուսի ոգեսումսիւուն նովրու
ումելի վուցմեն նմո վմզմելի վմզմնաստ Ո .⁵

ոչտ վլուզուլուսն ո վմզմութ վլութ վունուցի նոդմե
վմզմութ ովմուցաս վլութ վունուցի նոդմե
ոմտարուց լզմիւմելի զ ժագեն ող ովմզմնե
ասոյ վկուուց մչմութ նովուկումու կու ո .⁶

ԵՂՎԱԿԻՌԱԳԻ ՎԱՐՁԵՌՆՏՈՒ ՂՐԻԳՐԱՑ 2-Ի

9

մի-զմ յումթ
ո մաժոր ո տոզուա ոտազվասուրմելի մտուիտոց
ոտմթիւրմելի վմսուզմաս զ ժագեն մմաց : իսմէ
մաժոր յումեն շ մմու լզմե զ ժագեն .¹⁰

:վմզմուրմաո
քտինի ովմեզուցումց ոմ-սո ոմտչորուց լզմիւմզի զ
ժագեն ովմզմուցումց յուսուցմել ովմուզթուիտոց .⁶
լզմե զ ժագեն ստցի նվզումց մասով ո մմզմելի նվլ
ոտմթիսի ստցի մմզմութ օտմնուտով լուտ զ ժագեն
ովմզմուց ովմթուո լզմուրուց զ ժագեն մլումտցի մն
մուկ մորմթակուտունովոցյու ուլուտ մմզմելի վկու
ոցտ մդմմուտ յուսուցմել ովմուզթուիտոց .⁸

:քտինուտ մնասով
մկուումուի կով քտմնամույոյ յոտի քտմուետ
զ յուախմա մեուուց մավկութ 0/008 ո մվլուում
0/008 մվլումու վկուումուի 0/007 վովլ քտմուի
կուութ զ ժագեն մաի մյուրմթումն քտմուով լուտ
զ ժագեն ովմզմուց մմզմելի օտմնուտով .²

լուտ զ ժուգեն ովիսմսւամ նզեր ո
ովորմուն ովմզմուիւսն ովմուրցա զ ժագենուտ մդի
ովենմսի մորտց վմզմնաստոր մնզեր ումուն ո
վուցմաց : ովմուվր քուկոս նվկուուց ոտմիուրու 6—8
լզմնար զմ վլզմուի տասնօ ո ոտրմուն նզր վոքու
ումելի վմզմուցմա նմի ո վմզմուցմա զ
իսուորմուն յոտի իսասնօ ոտբուզուումուն լզովմ
ուովսի զմ վլզմուի մոուր վր վտաով վոքումումելի
վմզմուցմաց : յուսմենց ուլուզզուա տառի մյուրմթ
ուսկուութ մտուիութ մուամթուուց .⁹

: լզմիւմումելի վլզմուի վէ իսասնօ
ո իսասով ովմուցուց ութթ ովմզմնաստ Ո : վովլ
քտիչոց յուսուցմել ոտրկենոք ո կոմսիուլ զ ժագեն

յերկրորդ կիսում արդեն պետք է կերակրվեն
այնպես, ինչպես կերակրվում են նդի կովերը:

7

ՀՈՐԹԵՐԻ ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԽՆԱՄՔԸ

1. Հորթերը պետք է ապահովված լինեն հոր-
թանոցին մոտիկ, վոչ ճահճային, հասակավոր
